ՀՀ Արմավիրի մարզի Արտաշարի գյուղապետարանը
Հայտարարում է մրցույթ գյուղապետարանի
Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի /ծածկագիր3.3-1/
Համայնքի ծառայության թափուր պաշտոնը
զբաղեցնելու համար

1. 2-րդ կարգի մասնագետը՝

ա/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով:

բ/ պարտավորություն է կրում համակարգչային մուտքագրմամբ ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար:

գ/ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը:

դ/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքներ:

գ/իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ առնվազն միջնակարգ կրթություն:

3.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2014թ. սեպտեմբերի 22-ին ժամը 12:00-ին Արտաշարի գյուղապետարանում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետյևալ փաստաթղթերը.

Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով/ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/:

Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստատղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:

Հայտարարություն այն մասին,որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ. մարտի 3-ի N310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, ինչպես նաև դատական կարգով չի չանաչվել անգործունակ և սահմանափակ գործունակ:

Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային,տեղամասային կցագրման վկայականի պատճեններ:

Մեկ լուսանկար 3X4 չափսի:

Անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արմավիրի մարզի Արտաշարի գյուղապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն՝ ք.Արմավիր Աբովյան 71,հեռ. 0237-2-07-70/:Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2014թ. սեպտեմբերի 4-ը: